

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որ.

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն հարցումներ կատարի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին և վերջինիս խնդրում եմ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին տրամադրել իմ ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից կարող են հաշվի առնվել ինձ հետ վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից վարկային (փոխառության և այլն) պայմանագիր կնքելու դեպքում տվյալ վարկային (փոխառության և այլն) պայմանագրի գործողության ողջ ընթացքում, իսկ զվաճվոր վարկային պայմանագրի առկայության դեպքում նաև վերջինիս գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի առանց ինձ նախապես տեղյակ պահելու «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին տրամադրի իմ ապագա ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն հարցում կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամին, և խնդրում եմ վերջինիս տրամադրել իմ վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը կարող է կիրառվել Բանկի կողմից:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով ինձ պատկանող գույքերի վերաբերյալ հարցում կատարի ՀՀ կադաստրի կոմիտե և ստանա սպառիչ տեղեկատվություն իմ գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային գործից ստանա սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, իմ անունից դիմում ներկայացնի ՀՀ կադաստրի կոմիտե, կատարի անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունքի պետական գրանցում, ստանա փաստաթղթեր, կատարի վճարումներ՝ մինչև իմ վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով ինձ պատկանող տրանսպորտային միջոցների վերաբերյալ հարցում կատարի ՀՀ Ճանապարհային ոստիկանություն և ստանա սպառիչ տեղեկատվություն տրանսպորտային միջոցների նկատմամբ իմ գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև ստանա սեփականության իրավունքի վկայականի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ մինչև իմ վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն հարցում կատարի «Հայաստանի ավտոապահովագրողների քյուրո» ԻԱՄ-ին և ապահովագրական ընկերություններին և ստանա ցանկացած տեղեկատվություն սեփականության իրավունքով ինձ պատկանող տրանսպորտային միջոցների ապահովագրության վերաբերյալ (այդ թվում՝ ապահովագրի և շահառուների վերաբերյալ տեղեկություններ)՝ մինչև իմ վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

• «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից ինձ ուղարկվեն ծանուցումներ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած տեղեկատվության վերաբերյալ:

• Սույնով ծանուցվում եմ, ինչպես նաև տալիս եմ իմ համաձայնությունը, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (ՀՀ, ք. Երևան, Արամի 82-84) 50 տարվա ընթացքում հարցումներ կատարի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ (ԷԿԵՆԳ)՝ ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի, ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության, ՀՀ Ոստիկանության ճանապարհային ոստիկանության, ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության, ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ կադաստրի կոմիտեի տվյալներից իմ վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն ստանալու նպատակով, որն օգտագործվելու և ուսումնասիրվելու է ծառայությունների մատուցման հետ կապված ցանկացած գործընթացում, ինչպես նաև իմ անձնական տվյալները «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից փոխանցվի «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ, ՀՀ կենտրոնական բանկ, պետական իրավասու մարմիններ և այն իրավաբանական անձանց, որոնց կանոնադրական կապիտալում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն ունի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել իմ գրավոր դիմումի հիման վրա:

Գիտակցում եմ, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

Սույն համաձայնությունը կարդացել եմ և հավաստում եմ, որ այն ինձ համար ամբողջությամբ հասկանալի և ընդունելի է:

_____	_____	_____	_____./...../202...թ.
Դիմողի անուն ազգանուն հայրանուն/անվանում)	(անձնագիր/ՀՎՀՀ)	(ստորագրություն) Կ.տ.	
_____	_____	_____	_____./...../202...թ.
Դիմողի անուն ազգանուն հայրանուն/անվանում)	(անձնագիր/ՀՎՀՀ)	(ստորագրություն) Կ.տ.	
_____	_____	_____	_____./...../202...թ.
Դիմողի անուն ազգանուն հայրանուն/անվանում)	(անձնագիր/ՀՎՀՀ)	(ստորագրություն) Կ.տ.	